ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/10» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 28 » « մարտի » 2018թ.**
ժամը 17 [30]

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ս.Նավասարդյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ.Զոհրաբյան

1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/10» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ռ.Զոբանյան)

1.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/10» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018 թվականի մարտի 28-ին, ժամը 17:30-ին, ՀՀ բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/10» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/10» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի մարտի 23-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/10» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ռ.Զոբանյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից Հրավերի 2-րդ մասի 3. կետով նախատեսված փաստաթղթերը՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ բնապահպանության նախարարության gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները մրցույթի հաղթող ճանաչել՝ «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին:
4.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/10» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ անգործության ժամկետի ավարտից հետո, ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:
4.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
4.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները՝

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) _____ Ռ.Զոբանյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Լ. Ավետիսյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Ս.Նավասարդյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Հ.Հովհաննիսյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Ա.Փաշայան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) _____ Լ. Զոհրաբյան